ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/67

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Բողոք բերող՝ «Վերիտաս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Վերիտաս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 20.09.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը

ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1» ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 20.09.2019թ.-ին:

23.09.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 26.09.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 26.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.10.2019թ.-ին:

2. <u>ԳԲՔԱ-LO-2019/67 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ. ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Ընկերությունը 20.09.2019թ.-ին ներկայացրած բողոքով խնդրել է արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և

պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1» ընթացակարգը:

ՀՀ առողջապահության նախարարության 01.10.2019թ.-ի թիվ Մ-43836-2019 գրության համաձայն՝ թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգը 2019 թվականի սեպտեմբերի 16-ին armeps.am համակարգում լուծարվել է՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված հայտի հիման վրա նոր ընթացակարգ հայտարարելու նպատակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 16.09.2019թ.-ին կայացված թիվ 2 արձանագրության համաձայն՝ թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ մինչև «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բողոք ներկայացնելը, գնահատող հանձնաժողովի կողմից գնման ընթացակարգը հայտարարավել է չկայացած: Ընդ որում պետք է փաստել, որ բողոքի պահանջը եղել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը, ինչը ըստ էության հանձնաժոովի կողմից կատարվել է:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ. ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հաշվի առնելով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 16.09.2019թ.-ին կայացված թիվ 2 արձանագրության համաձայն՝ թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած և հայտարարվել նոր՝ թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով գնման ընթացակարգ, որպիսի պայմաններում բողոքի քննությունը դառնում է առարկայազուրկ և անհնար:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ.-ին ներկայացրած բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**